

բելու է , ու այնպէս արևուն մէջ դնելու է որ աղէկ մը չորնայ : Իսկ ցուրտ և միուշ եղած օրերը կրակի քով պէտք է չորցընել : Եւ այն ամաններն որ երկարատեն կաթնեղինի գործածուեր են , և դարձեալ այն ամանը որուն մէջ կաթը թթուեր աւրուեր է , պէտք է տաքցընել մէջերնին մոխրաջուր եփելով , ու ետքը պէտք է աւելով շփել նոյն ջրով . և եթէ աղէկ չմաքրուի՝ նորէն շփելու է նոյնպէս տաքցուցած մոխրաջրով . ու ետքը ցողուելու է նախ պարզ տաք ջրով , ու ետքը պաղ ջրով , ու ցամքեցընելու է , ինչպէս որ վերը ըսինք :

Գ . Հեռացընել կաթնարանին քովէն ամէն տեսակ օդոյն ապականիչ նիւթերը , ինչպէս են ճախճախուտները , աղտեղութիւնները , փտութիւնները , ախոռը , և դարձեալ ծուխ և փոշի պատճառող գործքեր չընել հոնտեղուանքը :

Ե . Ետոտ բան պէտք չէ խոթել կաթնարանին մէջ , որ և է կենդանի պէտք չէ խոթել . ցեխոտ կօշկով ներս չմտնել , անոր համար լաւ կ'ըլլայ կաթնարանին դրան քով փայտէ կօշիկներ դնել , ու ներս մտնելու ատեն զանօնք հագնիլ : Կարձեալ պէտք է զգուշանալ կաթնարանին մէջ ծուխ քաշելէն և կերակուր ուտելէն . և չխոթել կաթնարանին մէջ սաստիկ հոտ ունեցող կամ թթուելու բան մը . և պէտք չէ զիշերը որ և իցէ տեսակ ճրագով ներս մտնել՝ որոնք օդը իրենց ծխովը կ'ապականեն :

Զ . Իստ կարի քիչ անգամ պէտք է մտնել կաթնարանը . և ամառը լաւ կ'ըլլայ մտնել միայն առաւօտը և իրիկուան դէմ . իսկ ձմեռը կէսօրները : Եւ երկայն ժամանակ պէտք չէ կենալ մէջը , մէյմը որ օդն աւելի կը տաքնայ , և երկրորդ որ շարժմունքէ պատճառած օդոյն յուզմունքը կ'արգիլէ որ սերը աղէկ չբաժնուիր . թող որ մարդուն շունչը օդը կ'ապականէ :

Է . Ինքհանուր մաքրութիւն պէտք է ըլլայ տարին անգամ մը , և եթէ հարկաւոր ըլլայ՝ աւելի յաճախ , որն

որ պէտք է ընել քերելով , նորոգելով , լուալով ամէն կողմը և պատերը , որոնց ծեփն ալ պէտք է նորոգել :

Ը . Երբոր կաթնարանը մքլածի հոտ ստացեր է և մէջի կաթը շուտ կ'ապականի , պէտք է լուալ աղէկ մը և ծծմբի ծուխ տալ , և ետքը բանալով ամէն պատուհանները թողուլ որ մէջը օդ բանի , ինչուան որ ամենևին հոտ չըմնայ մէջը :

Կը շարունակուի :

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տաճկաստանի Շերասի մշակութիւնը :

Շերաս պահելու և մետաքս հանելու արուեստը ճարտարաց ձեռքով երթալով ծաղկելու հետ է Տաճկաստանի մէջ . այս բանս լաւ կ'իմացուի վարի դըրած ցուցակներնէս , որ հաւատարիմ աղբիւրներէ առնուած է : Հազիւ թէ տասնըհինգ տարի մը կայ որ Տաճկաստանէն ալ շերասի խողակի վաճառք կ'երթայ , և ան միջոցին խաւրուած մետաքսը բոլոր բոլոր 200 հազար քիլոկրամ էր , որ միջին հաշուով , քիլոկրամին 30 Ֆրանս գնելով , 6 միլիոն Ֆրանս կ'ընէր : Իսկ այս տարի մետաքսի և խողակի ամբողջ գինը 27,000,000 Ֆրանս քի կը հասնի , որ 135,000,000 ղուրուշ կ'ընէ : Եւս բանս Տաճկաստանի համար մեծ յառաջադիմութիւն մըն է , որ դեռ սկզբնաւորութիւն մը կրնայ ըսուիլ , վասն զի այս տարուան մետաքսին սղութիւնը թթենի մշակելու ջանքը շատ պիտի աւելցընէ : Բանի որ դեռ Տաճկաստանի մէջ չէր սկսած շերաս մանելու արուեստը , թթենին զուարճութեան և պտղատու ծառ մը կը սեպուէր , իսկ այսօրուան օրս շատ տեղ ամենէն շահաւոր բանը դարձած է :

Եւս տարի Տաճկաստանէն դուրս ելած մետաքսն ու խողակը կը հաշուեն որ հետեւեալ ցուցակին համեմատ ըլլայ .

Խոզակ

Պրուսա	քիլոկ . 150,000 .
Սէլանիկ ու շրջակայքը	„ 200,000 .
Լճրիանուպոլիս	„ 50,000 .
Վիտա	„ 15,000 .
Օմիւռնիա ու շրջակայքը	„ 10,000 .
Լսորիք	„ 200,000 .
Գումար	քիլոկ . 625,000 .

որ կ'ընէ 480,000 հօխայ . իսկ գինը , քիլոկրամին 17 Ֆրանք գնելով , կ'ընէ , 10,625,000 Ֆրանք .

Մետաքս .

(Գաղղիոյ ու Բիէմնիի նմանութեամբ)

Պրուսա	քիլոկ . 80,000 .
Սէլանիկ	„ 30,000 .
Լսորիք	„ 90,000 .
Օմիւռնիա	„ 20,000 .
Գումար	քիլոկ . 220,000 .

կամ , քիլոկրամին 75 Ֆրանք գնելով , ամբողջը մէկէն 16,500,000 Ֆրանք կ'ընէ :

Իսկ խոզակին և մետաքսին գինը մէկ ատեղ առած կ'ընէ 27,125,000 Ֆրանք . կամ , 135,625,000 զուրուշ : Երասին այս աստիճանի բարձր գին ունենալուն պատճառը Լսորիքի մէջ շատ յարգ ունենալն է . և թէ որ իր սովորական գինը դարձնելու համար աս գումարէն 100ին 25 ալ հանելու ըլլանք , կ'ելլէ 20 միլիոն Ֆր . որ ըսել է՝ թէ ասկէ տասնը հինգ տարի առաջ եղած շահին վրայ 14-15 միլիոն Ֆրանք աւելցած կը գըտնանք :

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հանքերու և ջրհորներու խորոպիւնը :

Հետաքրքրական բան մըն է գիտնալը թէ մինչև հիմա մարդուս ձեռքը երկրագնդի հաստատուն կեղևը որչափ աւելի խորութեամբ կրցեր է փորել թէ ջուր և թէ հանքեր հանելու համար :

Ինչպէս որ յայտնի է , քանի որ երկրի խորը թափանցէնք այնչափ ալ բարեխառնութեան աստիճանը կը բար-

ձրանայ . Սալֆերտին՝ կըրնէլի (Լաւրիզու մօտ) արդեսեան ջրհորը փորելու ատեն առած ջերմաչափական չափերովը գտաւ , որ ամէն մէկ 31 մեդր խորը երթալուն բարեխառնութիւնը հարիւր աստիճան ջերմաչափին վրայ մէկ կը բարձրանայ : Լսով կըրնէլի ջրհորը որ 547 մ . խորութիւն ունի , յատակը գրեթէ 17 ու կէս աստիճան աւելի բարձր բարեխառնութիւն ունի :

Թէ որ այս ջրհորին պեղումը դեռ 250 մ . ալ աւելի առաջ երթալու ըլլար , որով ինչպէս կը կարծուի՝ ջրաբեր խաւին հասնուէր , կըրնէլի ջրհորը կատարեալ ջերմադիւր մը կ'ըլլար ջերմուկներուն տաքութեամբ տալով ջուրը : Սալֆերտինին դրութեամբ՝ պարզ հաշուով մը կը գտնանք որ 3 քիլոմեդր խորութեամբ եռացեալ ջրոյ ջերմութիւնը պիտի գտնանք , իսկ 60 քիլոմեդրին հանքաբանական սնդագոյն գոյացութիւններն ալ , ինչպէս են լաւան , պազալը , պորփիւրը , դրաքիդը , կրանիդը և այլն , բոլորովին հալած պիտի ըլլան . վասն զի պէտք է որ այս խորութեան ջերմութիւնը 2,000 աստիճանէ պակաս չըլլայ :

Լսկէց կը հետեւի որ երկրագնդի